

Երեք իրար հաջորդող թվեր

Յուրաքանչյուր թվին հաջորդող թիվը ստանալու համար պետք է այդ թվին գումարել 1:

Օրինակ՝ 1 թվին հաջորդող թիվը ստանալու համար պետք է՝ $1+1=2$,
իսկ 2 թվին հաջորդող թիվը գտնելու համար պետք է՝ $2+1=3$:

Այսպիսով՝ 1,2,3 թվերը երեք իրար հաջորդող թվեր են:

1,2,3 իրար հաջորդող թվեր կարելի է ստանալ նաև, եթե $1+1=2$, $1+2=3$:

Երեք իրար հաջորդող **բնական թվերը** գտնելու համար կարող ենք
կատարել հետևյալ քայլերը՝

1-ին թվին 1 գումարելով ստանում ենք 1-ին թվին հաջորդող թիվը,
իսկ 1-ին թվին 2 գումարելով՝ 2-րդ թվին հաջորդող թիվը:

Իրար հաջորդող **կենտ բնական թվեր** ստանալու համար յուրաքանչյուր
կենտ թվի նախորդին պետք է գումարել 2:

Երեք իրար հաջորդող **բնական կենտ թվերը** գտնելու համար կարող
ենք կատարել հետևյալ քայլերը՝

1-ին **կենտ** թվին 2 գումարելով ստանում ենք 1-ին թվին հաջորդող **կենտ**
թիվը, իսկ 1-ին **կենտ** թվին 4 գումարելով՝ 2-րդ թվին հաջորդող **կենտ**
թիվը:

Օրինակ՝ 1,3,5 թվերը իրար հաջորդող բնական կենտ թվեր են:

1-ին կենտ թիվը 1 է, իսկ այդ թվին հաջորդող կենտ թիվը գտնելու
համար՝ $1+2=3$, իսկ 3 թվին հաջորդող կենտ թիվը գտնելու համար՝
 $3+2=5$ կամ $1+2=3$, $1+4=5$:

Իրար հաջորդող **բնական գույգ թվեր** ստանալու համար
յուրաքանչյուր գույգ թվի նախորդին պետք է գումարել 2:

Երեք իրար հաջորդող բնական զույգ թվերը գտնելու համար կարող ենք կատարել հետևյալ քայլերը՝

1-ին զույգ թվին 2 գումարելով ստանում ենք 1-ին թվին հաջորդող զույգ թիվը, իսկ 1-ին թվին 4 գումարելով՝ 2-րդ զույգ թվին հաջորդող զույգ թիվը:

Օրինակ՝ 2,4,6 թվերը իրար հաջորդող բնական զույգ թվեր են:

1-ին զույգ թիվը 2 է, իսկ այդ թվին հաջորդող զույգ թիվը գտնելու համար՝ $2+2=4$, իսկ 4-ին թվին հաջորդող զույգ թիվը գտնելու համար՝ $4+2=6$, կամ $2+2=4$, $2+4=6$:

Այժմ իմանալով թվերի գումարը գտնենք այդ երեք իրար հաջորդող բնական թվերը: **Դիտարկենք օրինակներ:**

Օրինակ 1. Գտեք այն երեք իրար հաջորդող բնական թվերը, որոնց գումարը լինի 306:

Լուծում՝

Քանի որ իրար հաջորդող բնական թվերից 1-ինին 1 գումարելով ստանում ենք 1-ին թվին հաջորդող թիվը, իսկ 1-ին թվին 2 գումարելով՝ 2-րդ թվին հաջորդող թիվը: Մյուս կողմից իրար հաջորդող բնական թվերի գումարը 306 է, ապա $306-(1+2)=306-3=303$

$303:3=101$, ուրեմն այդ թվերից 1-ինը 101 է: 1-ին թվին հաջորդող թիվը՝ $101+1=102$, իսկ 2-րդ թվին հաջորդող թիվը՝ $101+2=103$:

Երեք իրար հաջորդող բնական թվերն են՝ 101,102,103:

Օրինակ 2. Գտեք այն երեք իրար հաջորդող բնական զույգ թվերը, որոնց գումարը լինի 306:

Լուծում՝

Քանի որ իրար հաջորդող բնական զույգ թվերից 1-ինին 2 գումարելով ստանում ենք 1-ին թվին հաջորդող զույգ թիվը, իսկ 1-ին թվին 4 գումարելով՝ 2-րդ զույգ թվին հաջորդող զույգ թիվը: Մյուս կողմից իրար հաջորդող բնական թվերի գումարը 306 է, ապա $306-(2+4)=306-6=300$ $300:3=100$, ուրեմն այդ թվերից 1-ինը 100 է: 1-ին թվին հաջորդող զույգ թիվը՝ $100+2=102$, իսկ 2-րդ թվին հաջորդող զույգ թիվը՝ $100+4=104$:
Երեք իրար հաջորդող բնական զույգ թվերն են՝ 100,102,104:

Օրինակ 3. Գտեք այն երեք իրար հաջորդող բնական կենտ թվերը, որոնց գումարը լինի 309:

Լուծում՝

Քանի որ իրար հաջորդող բնական կենտ թվերից 1-ինին 2 գումարելով ստանում ենք 1-ին կենտ թվին հաջորդող կենտ թիվը, իսկ 1-ին կենտ թվին 4 գումարելով՝ 2-րդ կենտ թվին հաջորդող կենտ թիվը: Մյուս կողմից իրար հաջորդող բնական թվերի գումարը 309 է, ապա $309-(2+4)=309-6=303$ $303:3=101$, ուրեմն այդ թվերից 1-ինը 101 է: 1-ին թվին հաջորդող կենտ թիվը՝ $101+2=103$, իսկ 2-րդ թվին հաջորդող կենտ թիվը՝ $101+4=105$:
Երեք իրար հաջորդող բնական կենտ թվերն են՝ 101,103,105:

Առաջադրանքեր

1. Երեք հաջորդական թվերի գումարը 303 է: Որո՞նք են այդ թվերը:
2. Գտեք այն երեք իրար հաջորդող բնական թվերը, որոնց գումարը լինի 363:
3. Գտեք երեք հաջորդական թվեր, որոնց գումարը լինի 180 է:
4. Գտեք երեք հաջորդական թվեր, որոնց գումարը լինի 432 է:
5. Երեք իրար հաջորդող բնական կենտ թվերի գումարը 225 է:
Որո՞նք են այդ թվերը:
6. Երեք իրար հաջորդող բնական կենտ թվերի գումարը 321 է:
Որո՞նք են այդ թվերը:
7. Երեք հաջորդական կենտ թվերի գումարը 69 է: Գտեք այդ թվերը:
8. Երեք իրար հաջորդող բնական զույգ թվերի գումարը 288 է:
Որո՞նք են այդ թվերը:
9. Երեք իրար հաջորդող բնական զույգ թվերի գումարը 336 է:
Որո՞նք են այդ թվերը:
10. Երեք իրար հաջորդող բնական զույգ թվերի գումարը 318 է:
Որո՞նք են այդ թվերը: